

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N000	AGREEMENT N000 ON ARCHITECTURAL-ENGINEERING WORKS
Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), ք. Երևան 2025թ.	Republic of Armenia (RA), Yerevan, 2025
Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամն, (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս ռեկտոր՝ տիկին Սանդրա Նակուզի Բուրդիշոնի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից,	The French University in Armenia Foundation (hereinafter referred to as the "Client"), represented by Rector Mrs. Sandra Nacouzi Bourdichon, acting based on the charter of the Client, on one side,
և	and
Կազմակերպության իրավաբանական անվանում, (այսուհետ՝ «Կապալառու»), ի դեմս տնօրեն՝ պարոն/տիկին Անուն Ազգանուն, որը գործում է Կապալառուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (Պատվիրատուն և Կապալառուն միասին հիշատակվելու դեպքում այսուհետ՝ «Կողմեր», իսկ առանձին հիշատակվելու դեպքում այսուհետ նաև՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.	[Legal Name of the Organization] (hereinafter referred to as the "Consultant"), represented by Director Mr./Ms. [Name Surname], acting based on the charter of the Consultant, on the other side, (hereinafter collectively referred to as the "Parties" and individually as a "Party"), have entered into this Agreement (hereinafter referred to as the "Agreement") as follows:
1. Պայմանագրի առարկան	1. Subject of the Agreement
1.1. Պայմանագրով Կապալառուն պարտավորվում է իրականացնել «Աշխատանքների Նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ «Աշխատանք» կամ «Աշխատանքներ»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Պայմանագրի, այս թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներով սահմանված պայմաններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքները, և վճարել այդ Աշխատանքների/Աշխատանքների արդյունքների դիմաց Պայմանագրով նախատեսված չափով և կարգով:	1.1. 1.1. Under this Agreement, the Consultant undertakes to carry out the works defined in Annex 1 of the Agreement entitled "Work Description" (hereinafter referred to as "Work" or "Works"), and the Client undertakes to accept the results of the Works performed in compliance with the terms specified in the Agreement, including its integral annexes, as well as in accordance with the requirements defined by the legislation of the Republic of Armenia (RA), and to pay for these Works/results of the Works in the amounts and according to the procedure stipulated in this Agreement.
2. Աշխատանքների կատարման ժամանակացույցը և հանձնման-ընդունման կարգը	2. Works Implementation Timeline and Procedure for Delivery-Acceptance
2.1. Աշխատանքների իրականացումը սկսվում է Պայմանագրի կնքման պահից հետո անմիջապես, սակայն ոչ ուշ քան Պայմանագրի կնքմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:	2.1. 2.1. The implementation of the Works shall commence immediately upon signing this Agreement, but no later than the first workday following its signing.
2.2. «Աշխատանքների նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ցանկացած փուլում/փուլերում ներառված այն Աշխատանքները, որոնց իրականացման ընթացքը և/կամ արդյունքները ենթակա են համաձայնեցման ՀՀ իրավասու/շահագրգիռ պետական և տեղական ինքակառավարման մարմինների հետ, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև այլ անձանց	2.2. Any Works included in the phase(s) specified in Annex 1 of the Agreement entitled "Work Description," the implementation process and/or results of which are subject to approval by the competent/interested state and local government bodies of the Republic of Armenia (RA), and, if necessary, other entities, shall be considered completed only after obtaining the approval from these competent/interested bodies of RA, and if

հետ, կարող են ավարտված համարվել միայն այդ Աշխատանքների արդյունքների՝ ՀՀ իրավասու/շահագրգիռ մարմինների, իսկ անհրաժեշտության դեպքում այլ անձանց հետ համաձայնեցումից և Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո:	required, from other entities, as well as upon final confirmation by the Client.
2.3. «Աշխատանքների նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված թիվ 1.1, 1.2, 1.3 ենթափուլերից յուրաքանչյուրում ներառված Աշխատանքների ավարտից հետո Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել այդ Աշխատանքների վերաբերյալ համաձայնեցման ակտ՝ կցելով կատարված Աշխատանքների արդյունքները: Փուլ 1-ի ամբողջական ավարտից հետո (ներառյալ 1.1, 1.2, 1.3 ենթափուլերի ավարտը), Կապալառուի կողմից Պատվիրատուին է ներկայացվում Աշխատանքների/Աշխատանքների արդյունքների հանձնման-ընդունման ակտ, որում, ի թիվս այնի, նշվում է Հավելված 3-ի 1.3-րդ կետով նշված գումարը: «Աշխատանքների նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված 2-րդ փուլում ներառված Աշխատանքների իրականացման դեպքում Կապալառուն պարտավորվում է յուրաքանչյուր ամիս Պատվիրատուին ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում կատարված Աշխատանքների/ստացված Աշխատանքների արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ակտեր, որոնցից յուրաքանչյուրում, ի թիվս այնի, նշվում է Հավելված 3-ի 2.4-րդ կետով նշված գումարի համապատասխան հատվածը:	2.3. Upon completion of the Works included in sub-phases 1.1, 1.2, and 1.3 of Annex 1 titled "Work Description," the Consultant shall submit to the Client an Act of Agreement concerning these Works, along with the results of the performed Works attached. After the full completion of Phase 1 (including sub-phases 1.1, 1.2, and 1.3), the Consultant shall submit to the Client an Act of Delivery-Acceptance of the Works/results of Works, explicitly indicating, among other details, the amount stipulated in point 1.3 of Annex 3. For the Works included in Phase 2, as defined in Annex 1 titled "Work Description," the Consultant shall submit monthly Acts of Delivery-Acceptance to the Client regarding the Works/results performed during the preceding month, explicitly specifying, among other details, the corresponding amount indicated in point 2.4 of Annex 3.
2.4. Պատվիրատուն պարտավորվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտի ստացման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին ներկայացնել իր դիտողություններն (առկայության դեպքում), իսկ դրանց բացակայության դեպքում ընդունել կատարված Աշխատանքների արդյունքները և ստորագրել համապատասխան հանձնման-ընդունման ակտը: Պատվիրատուի կողմից դիտողությունների ներկայացման դեպքում Կողմերը պարտավորվում են կազմել երկկողմանի ակտ (այսուհետ՝ «Թերությունները արձանագրող ակտ»)-՝ նշելով համապատասխան Աշխատանքների արդյունքներում հայտնաբերված բոլոր թերությունները, բացթողումներն, անհամապատասխանությունները և վերջիններիս շտկման, վերացման ժամկետները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև եղանակները: Կապալառուն պարտավոր է Թերությունները արձանագրող ակտի համաձայն՝ կատարել համապատասխան լրացումներ, փոփոխություններ և/կամ շտկումներ՝ առանց Պատվիրատուից հավելյալ վարձատրություն պահանջելու և ստանալու:	2.4. The Client shall, within five (5) working days from receipt of the relevant delivery-acceptance act, submit any comments or remarks (if any) to the Consultant; or, in the absence of such remarks, accept the results of the performed Works and sign the respective delivery-acceptance act. If the Client submits remarks, the Parties shall jointly prepare a bilateral act (hereinafter referred to as the "Deficiency Report"), specifying all identified deficiencies, omissions, and inconsistencies in the results of the respective Works, as well as the deadlines and, if necessary, methods for their correction and elimination. The Consultant is obliged to make the necessary additions, modifications, and/or corrections in accordance with the Deficiency Report, without requesting or receiving any additional remuneration from the Client.

2.5. Աշխատանքների/Աշխատանքների արդյունքների մասով հանձնման-ընդունման ակտերից յուրաքանչյուրը Կողմերի կողմից ստորագրվելու պահին, ի թիվս այնի, Պատվիրատուին են փոխանցվում նաև Կապալառուի կողմից հանձնված և Պատվիրատուի կողմից ընդունված Աշխատանքների արդյունքների նկատմամբ բոլոր գույքային իրավունքները՝ ներառյալ թվային ֆայլերի նկատմամբ գույքային և ոչ գույքային իրավունքները:	2.5. Upon mutual signing of each delivery-acceptance act concerning the Works/results of the Works, all property rights, including proprietary and non-proprietary rights, including the digital files associated with the results of the Works delivered by the Consultant and accepted by the Client, shall be transferred to the Client.
2.6. Աշխատանքների ծավալների կամ բարդության փոփոխության դեպքում Կողմերը պարտավոր են համաձայնեցնել այդ փոփոխությունները՝ գրավոր կերպով լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով՝ անհրաժեշտության դեպքում, համապատասխան փոփոխություններ կատարելով Աշխատանքների արժեքի և դրանց կատարման ժամկետների մասով:	2.6. In the event of changes in the scope or complexity of the Works, the Parties shall agree upon these adjustments through a written supplementary agreement, and, if necessary, shall make corresponding amendments to the price and timelines of the Works.
3. Աշխատանքների արժեքը և վճարման կարգը	3. Price of the Works and Terms of Payment
3.1. Աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 00,000,000 (զրո միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ «Պայմանագրի գին»): Սույն կետով սահմանված ընդհանուր արժեքը ներառում է Կապալառուի կողմից կատարվելիք բոլոր ծախսերը, հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:	3.1. The total price of the Works shall amount to AMD 00,000,000 (zero million) (hereinafter referred to as the "Contract Price"). The total amount specified herein includes all costs, taxes, duties, and other mandatory payments to be incurred by the Consultant.
3.2. Պայմանագրի կնքման համար հիմք են հանդիսանում Կապալառուի կողմից ներկայացված հետևյալ երաշխիքները. - Որակավորման երաշխիք՝ Փուլ 1-ի ընթացքում Աշխատանքների կատարման մասով Հավելված 3-ի 1.3. կետում նախատեսված գումարի 00%-ի չափով դրամական երաշխիք, որը պետք է մինչև Փուլ 1-ի մեկնարկը փոխանցված լինի Բանկում Կապալառուի անունով բացված էսքրո հաշվին և առկա լինի առնվազն մինչև Փուլ 1-ի մասով Կողմերի միջև ավարտական հանձնման-ընդունման ակտի ստորագրմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օրը: - Պայմանագրային պարտավորությունների կատարման երաշխիք՝ Պայմանագրի գնի 00% չափով, որը պետք է մինչև Փուլ 2-ի մեկնարկը փոխանցված լինի Բանկում Կապալառուի անունով բացված էսքրո հաշվին և առկա լինի առնվազն մինչև Փուլ 4-ի մասով Կողմերի միջև ավարտական հանձնման-ընդունման ակտի ստորագրմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օրը:	3.2. The following guarantees provided by the Consultant shall serve as the basis for concluding this Agreement: - Qualification Guarantee: A financial guarantee equivalent to 00% of the amount specified in point 1.3 of Annex 3 for the Works to be performed during Phase 1. This guarantee must be deposited to an escrow account opened in the name of the Consultant at [bank name] bank prior to the commencement of Phase 1, and shall remain in effect until at least ten (10) working days following the signing of the final handover-acceptance act for Phase 1 between the Parties. - Performance Guarantee: A guarantee equivalent to 00% of the Contract Price, to be transferred to an escrow account opened in the name of the Consultant at [bank name] bank before the commencement of Phase 2, and shall remain valid until at least ten (10) working days following the signing of the final handover-acceptance act for Phase 4 between the Parties.
3.3. Պատվիրատուն պարտավորվում է Աշխատանքների կատարման դիմաց Կապալառուին վճարումները կատարել	3.3. The Client undertakes to make payments to the Consultant for the performance of the Works in accordance with the procedure and amounts

«Աշխատանքների կատարման ու վճարումների ժամանակացույց» վերտառությամբ Հավելված 3–ով նախատեսված կարգով և չափով:	specified in Annex 3 titled “Works Implementation Timelines and Payment Schedule.”
3.4. Պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ Պատվիրատուի կողմից Կապալառուի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:	3.4. All payments under the Agreement are to be made through a wire transfer by the Client to the Consultant’s bank account.
4. Կողմերի իրավունքները և պարտականությունները	4. The Rights and Obligations of the Parties
4.1. Պատվիրատուն պարտավորվում է՝	4.1. The Client shall be obliged to:
4.1.1. Ելակետային տվյալների փոփոխման դեպքում Կապալառուին տրամադրել նոր տվյալներ,	4.1.1. in the event of change to initial design data, promptly provide the Consultant with new data;
4.1.2. Կապալառուին ժամանակին վճարել պատշաճ կատարված Աշխատանքների դիմաց՝ «Աշխատանքների կատարման ու վճարումների ժամանակացույց» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 3-ով նախատեսված կարգով:	4.1.2. To make timely payments to the Consultant for the properly performed Works, in accordance with the procedure set forth in Annex 3 of the Agreement titled “Works Implementation Timelines and Payment Schedule.”
4.1.3. Կրել Աշխատանքների կատարման շրջանակում Կապալառուի կողմից նախագծային փաստաթղթերի կազմման նպատակով բոլոր անհրաժեշտ ինժեներաերկրաբանական նյութերի, գեոդեզիական հանույթների և նախագծման փուլում անսպասելի ի հայտ եկած նոր պահանջվող տվյալների ձեռքբերման առնչությամբ և Կապալառուի կողմից հիմնավորված և ողջամիտ լրացուցիչ ծախսերը:	4.1.3. To bear all justified and reasonable additional expenses incurred by the Consultant in connection with the acquisition of all necessary engineering-geological materials, geodetic surveys, and any newly emerged data required during the design phase, for the purpose of preparing the design documentation within the scope of the Works.
4.2. Պատվիրատուն իրավունք ունի՝	4.2. The Client shall have the right to:
4.2.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող Աշխատանքների ընթացքը և որակն՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,	4.2.1. at any time, check the progress and quality of the Works carried out by the Consultant without interfering with the latter’s activities;
4.2.2. Միակողմանիորեն հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և Կապալառուից պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտում է Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման ժամկետները կամ Պայմանագրի այլ էական պայմանները: Սույն ենթակետով նախատեսված իրավունքն իրացնելիս Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի կատարումից հրաժարվելու և իր կողմից կրած վնասների փոխհատուցման պահանջը պարունակող ծանուցումը Կապալառուին ուղարկել Պայմանագրի կատարումից հրաժարմանը նախարդող առնվազն 00–րդ (տասներորդ) աշխատանքային օրը,	4.2.2. To unilaterally withdraw from the Agreement and claim compensation for damages caused, if the Consultant violates the deadlines for performance of the Works or any other essential terms of the Agreement. When exercising this right, the Client is obliged to send the Consultant a notice including the withdrawal from the Agreement and the claim for compensation of damages at least on the 10th (tenth) working day prior to the intended date of termination.

4.2.3. Չընդունել Աշխատանքների արդյունքը և հրաժարվել Կապալառուին կատարված Աշխատանքների/Աշխատանքների արդյունքների դիմաց վճարելուց, եթե Կապալառուն Աշխատանքները չի իրականացրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին և նորմերին և/կամ Պայմանագրի պայմաններին համապատասխան:	4.2.3. To reject the results of the Works and refuse to pay the Consultant for the performed Works/results of the Works if the Consultant has failed to carry out the Works in compliance with the requirements and standards established by the legislation of the Republic of Armenia and/or the terms of the Agreement.
4.3. Կապալառուն պարտավոր է՝	4.3. The Consultant shall be obliged to:
4.3.1. Պատշան կերպով կատարել Աշխատանքները՝ համաձայն գործող ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, նախագծային առաջադրանքի, այլ ելակետային տվյալների և Պայմանագրի պայմանների,	4.3.1. To properly perform the Works in accordance with the applicable legislation of the Republic of Armenia, the requirements of normative-technical documents, the design brief, other initial data, and the terms of the Agreement.
4.3.2. Պահպանել նախագծային առաջադրանքում և այլ ելակետային փաստաթղթերում պարունակվող պահանջները՝ չձեղվելով դրանցից՝ առանց Պատվիրատուի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև իրավասու մարմինների գրավոր համաձայնության,	4.3.2. To adhere to the requirements contained in the design brief and other initial documents, without deviating from them unless with the prior written consent of the Client and, if necessary, the relevant competent authorities.
4.3.3. Աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման շրջանակում նախագծային փաստաթղթերի կազմման նպատակով բոլոր անհրաժեշտ ինժեներաերկրաբանական նյութերի, գեոդեզիական հանույթների կամ այլ տվյալները ձեռքբերման հարցում, այդ թվում՝ բանակցություններ վարել համապատասխան աշխատանքներն իրականացնող երրորդ անձանց հետ, հավաքագրել նրանց առաջարկները և ներկայացնել Պատվիրատուին ընտրության նպատակով, Պատվիրատուի անունից վերահսկողություն իրականացնել այդ աշխատանքների իրականացման նկատմամբ,	4.3.3. support the Client in the process of obtaining all necessary engineering-geological materials, geodetic surveys or other data required for developing the project design documentation within the framework of the Works, including conduct negotiations with third parties implementing such works, compile their proposals and submit to the Client for selection purposes, exercise control over the implementation of those works on behalf of the Client;
4.3.4. անհրաժեշտություն առաջանալու պարագայում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքների շրջանակում կազմված նախագծային փաստաթղթերը ներկայացնել փորձաքննության,	4.3.4. submit the project design documentation developed within the framework of the Works for expertise in line with the RA legislation; if there will be need of it.
4.3.5. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Աշխատանքների շրջանակներում կազմված նախագծային փաստաթղթերը ՀՀ իրավասու/շահագրգիռ մարմինների հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնելու նպատակով, ինչպես նաև աջակցել Պատվիրատուին շինարարության թույլտվության ստացման գործընթացում,	4.3.5. take all necessary measures to get the approval of the RA competent/interested bodies on the project design documentation prepared within the framework of the Works in accordance with the procedure established by the RA legislation and assist the Client in the process of obtaining construction permit;
4.3.6. Օրենքով սահմանված ժամկետում առանց Պատվիրատուից լրացուցիչ վարձատրություն	4.3.6. To eliminate, within the timeframe established by law and without requesting additional

պահանջելու, վերացնել իր կողմից կազմված նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ իրավասու/շահագրգիռ մարմիններից ստացված դիտողություններում նշված թերությունները,	compensation from the Client, any deficiencies noted in the remarks received from the competent/interested authorities of the Republic of Armenia regarding the design documentation prepared by the Consultant;
4.3.7. Առանց Պատվիրատուի գրավոր կերպով արտահայտված համաձայնության Աշխատանքների արդյունքը չհանձնել երրորդ անձանց,	4.3.7. not hand over the results of the Works to third parties without the written consent of the Client;
4.3.8. Պատվիրատուին ներկայացնել Պայմանագրի շրջանակներում հեղինակային հսկողության Աշխատանքներն իրականացնող իր աշխատակիցների ցուցակը՝ նշելով խմբի ղեկավարին,	4.3.8. provide the Client with a list of its employees to be involved in the Works of authorship supervision within the framework hereof, indicating the team leader;
4.3.9. Հետևել շինարարության իրականացման համապատասխանությանը հաստատված նախագծային փաստաթղթերի պահանջներին և լուծումներին,	4.3.9. exercise control over the compliance of the construction works with the requirements and solutions of the approved project design documentation;
4.3.10. Շինարարության վարման ընդհանուր մատյանի համապատասխան բաժնում գրանցել նախագծային լուծումներից կատարված շեղումներն՝ այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին,	4.3.10. register the deviations from the design solutions in the relevant section of the construction general log book by duly informing the Client thereon;
4.3.11. Անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կատարել նախագծային լուծումների փոփոխություններ և լրացումներ,	4.3.11. if so required, make changes and additions to the design solutions in the manner so prescribed;
4.3.12. Մեկնել շինարարության իրականացման վայր առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, ինչպես նաև Պատվիրատուի պահանջով ցանկացած պահի:	4.3.12. visit the construction site at least once every week, as well as upon the Client's request at any moment.
4.4. Կապալառուն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վճարելու իր կողմից փաստացի կատարված Աշխատանքների դիմաց, եթե Պատվիրատուն ժամանակին չի կատարում Պայմանագրով նախատեսված վճարումները՝ այդ մասին նախապես՝ 10 (տաս) աշխատանքային օր առաջ, գրավոր ծանուցելով Պատվիրատուին՝ պայմանով, որ իր կողմից պատշաճ կարգով կատարվել են բոլոր հանդիպակաց պարտավորությունները: Սույն կետի դրույթները կիրառելի չեն՝ Պայմանագրի 4.2.2-րդ ենթակետով նշված իրադարձությունների առկայության պարագայում:	4.4. The Consultant shall have the right to withdraw from the Agreement and claim payment for the Works actually performed if the Client fails to make the payments specified in the Agreement on time, by providing the Client with prior written notice at least ten (10) working days in advance, provided that all reciprocal obligations on the Consultant's part have been duly fulfilled. The provisions of this clause shall not apply in the event of the circumstances specified in sub-clause 4.2.2 of the Agreement.
5. Կողմերի պատասխանատվությունը	5. Liabilities of the Parties
5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի/ոչ պաշան կատարման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սահմաններում:	5.1. The Parties shall be held responsible for non-fulfilment or improper implementation of the obligations assumed hereunder in the manner and within the limits specified by the RA legislation.

5.2. Կապալառուին պատասխանատվություն է կրում Աշխատանքները չկատարելու և նախագծային փաստաթղթերն անպատշաճ կազմելու համար, ինչպես նաև հայտնաբերված թերությունների համար: Սույն գլխի իմաստով «թերություն» եզրույթը ներառում է նաև Կապալառուի կողմից կազմված փաստաթղթերում թույլտրված ցանկացած սխալ/բացթողում, որն առաջ է բերում Պատվիրատուի՝ համապատասխան օբյեկտի, դրա հատվածի շինարարության գծով կնքված շինարարական աշխատանքների կապալի պայմանագրի փոփոխություն՝ ուղղված շինարարական աշխատանքների արժեքի ավելացմանը, և/կամ Պատվիրատուի կողմից այդ օբյեկտի շինարարության համար ձեռքբերվելիք նյութերի գծով ծախսերի ավելացում:	5.2. The Consultant is responsible for the failure to perform the Works and for improper development of project design documentation, as well as for the discovered defects. Within the meaning of this chapter the term “defect” refers also to any mistake/omission committed by the Consultant in the documents prepared by the latter which results in amendment of the construction works performance contract of the respective object aimed at increase of the value of the construction works and/or in increase of the Client’s costs related to the materials being purchased by the Client for the construction of the given object.
5.3. Նախագծային փաստաթղթերում թերություններ հայտնաբերվելու դեպքում Պատվիրատուի պահանջով Կապալառուին պարտավոր է անհատույց վերափոխել նախագծային փաստաթղթերն, ինչպես նաև հատուցել հայտնաբերված թերությունների արդյունքում Պատվիրատուին պատճառված վնասները:	5.3. In case of revealing any defects in the project design documentation, the Consultant shall, upon the Client’s demand, remake it without remuneration, as well as compensate the Client for the damages incurred as a result of discovered defects.
5.4. Կապալառուին պարտավոր է Պատվիրատուին փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուին պատճառած վնասներն ամբողջությամբ: Պայմանագրի սույն կետով նախատեսված վնասների փոխհատուցումը Կապալառուին չի ազատում Պայմանագրի 5.5-րդ կետով նախատեսված տուժանքը Կապալառուին վճարելու պարտականությունից:	5.4. The Consultant shall be obliged to fully compensate the Client for any damages caused through the Consultant’s fault. The compensation of damages under this clause does not exempt the Consultant from the obligation to pay the penalty stipulated in Clause 5.5 of the Agreement.
5.5. Կապալառուի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետների կետանց թույլ տալու դեպքում Պատվիրատուին կարող է Կապալառուից պահանջել վճարելու տուժանք՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Պայմանագրի գնի 0.1%-ի չափով:	5.5. In the event of delays by the Consultant in meeting the deadlines specified in the Agreement, the Client may demand a penalty from the Consultant in the amount of 0.1% of the Contract Price for each day of delay.
5.6. Պատվիրատուի կողմից վճարման պարտավորության կետանց թույլ տալու դեպքում, Կապալառուին կարող է Պատվիրատուից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար չվճարված գումարի 0.1%-ի չափով:	5.6. In case of default of any payment obligation by the Client, the Consultant may require that the Client pay a penalty at the rate of 0.1% of the outstanding amount for each day of delay.
5.7. Պայմանագրով նախատեսված ցանկացած տիպի տուժանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով և դրա անբաժանելի մասը կազմող Հավելվածներով ստանձնած իրենց պարտավորությունների կատարումից:	5.7. Payment of any type of penalties stipulated by the Agreement shall not release the Parties from fulfilling their obligations under the Agreement and its integral Annexes.
6. Վեճերի լուծում	6. Dispute Resolution
6.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և	6.1. Any disputes or disagreements arising in

տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների մեկնարկի պահից 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ իրավասու դատարանի քննությանը:	connection with this Agreement shall be resolved through negotiations. If no agreement is reached between the Parties within ten (10) working days from the start of negotiations, the dispute shall be submitted to the competent court of the Republic of Armenia for resolution..
7. Պայմանագրի գործողության ժամկետը	7. Validity of the Agreement
7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը:	7.1. The Agreement shall come into effect upon execution and be effective until proper fulfilment by the Parties of their obligations assumed hereunder.
8. Պայմանագրի դադարեցումը	8. Termination of the Agreement
8.1. Պայմանագիրը կարող է դադարեցվել յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ Պայմանագրով նախատեսված պայմանների առկայության դեպքում Պայմանագրի կատարումից հրաժարվելու արդյունքում՝ մյուս Կողմին 10 (տասն) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու միջոցով, կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:	8.1. The Agreement may be terminated at the initiative of each Party upon the availability of the conditions specified herein by means of withdrawal from the Agreement, by giving a written notice to the other Party 10 (ten) working days in advance or upon mutual agreement of the Parties.
8.2. Պատվիրատուի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պատվիրատուն վճարում է Կապալառուի կողմից փաստացի և պատշաճ կատարված Աշխատանքների արժեքը, որը ենթակա է որոշման «Աշխատանքների Նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված յուրաքանչյուր փուլի Աշխատանքների ծավալի մեջ փաստացի կատարված Աշխատանքների ծավալը տոկոսային արտահայտությամբ որոշելու և այդ տոկոսը համապատասխան փուլի Աշխատանքների արժեքով բազմապատկելու միջոցով:	8.2. In the event of early termination of the Agreement at the initiative of the Client, the Client shall pay for the Works actually and properly performed by the Consultant. The value shall be determined by calculating the percentage of the actual volume of Works completed within each phase defined in Annex 1 titled "Work Description" and multiplying that percentage by the value of the respective phase.
8.3. Կապալառուի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պատվիրատուն վճարում է Կապալառուի կողմից մինչև Պայմանագրի լուծման պահը փաստացի Պայմանագրի պայմաններին համապատասխան կատարած Աշխատանքների արժեքը՝ այդ արժեքից նվազեցնելով իր կրած վնասների ու Կապալառուի նկատմամբ Պայմանագրի 5.5-րդ կետի համաձայն կիրառված տուժանքի արժեքների գումարման արդյունքում ստացված դրական գումարը: Եթե Կապալառուն հրաժարվում է Պայմանագրի կատարումից մինչև Փուլ 1-ի ավարտը, ապա իր նկատմամբ Պատվիրատուի պահանջով կարող է կիրառվել տույժ, որի չափը հավասար է Պայմանագրի 3.2-րդ կետում նշված «Որակավորման երաշխիք»-ի և «Պայմանագրային պարտավորությունների	8.3. In the event of early termination of the Agreement by the Consultant, the Client shall pay the price of the Works actually and properly performed by the Consultant, by deducting from the price to be paid the amount of incurred damages and of penalties imposed on the Consultant. If the Consultant refuses to perform the Contract before the end of Phase 1, then penalties may be applied equal to the full amount of the "Qualification Guarantee" and "Performance Guarantee" specified in clause 3.2. If the Consultant refuses to perform the Contract after the end of Phase 1, but before the end of Phase 2, then penalties may be applied in the full amount of the "Performance Guarantee" specified in clause 3.2.

կատարման երաշխիք»-ի արժեքի գումարման արդյունքում ստացվող գումարին: Եթե Կապալառուն հրաժարվում է Պայմանագրի կատարումից Փուլ 1-ի ավարտից հետո, սակայն մինչև Փուլ 2-ի ավարտը, ապա իր նկատմամբ Պատվիրատուի պահանջով կարող է կիրառվել տույժ՝ 3.2 կետում նշված «Պայմանագրային պարտավորությունների կատարման երաշխիք»-ի ամբողջական չափով:	
8.4. Պայմանագրի ցանկացած հիմքով վաղաժամկետ դադարեցման դեպքում Կապալառուի փաստացի կատարած Աշխատանքների արդյունքների նկատմամբ բոլոր գույքային իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին, և վերջինս իրավունք ունի այդ արդյունքներն օգտագործել և փոխանցել իր կողմից ներգրավված երրորդ անձանց Պայմանագրով նախատեսված Աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով:	8.4. In the event of early termination of the Agreement on any grounds, all property rights to the results of the Works actually performed by the Consultant shall be transferred to the Client, who shall have the right to use those results and to transfer them to third parties engaged by the Client for the purpose of completing the Works stipulated in the Agreement.
9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)	9. Force Majeure
9.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են հրդեհները, ջրհեղեղները, երկրաշարժերը, ապստամբությունները, պատերազմները, ռազմական գործողությունները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրն՝ այդ մասին նախապես գրավոր եղանակով տեղյակ պահելով մյուս կողմին:	9.1. The Parties shall not be held responsible for complete or partial non-fulfilment of any of their respective obligations, if it is the consequence of force majeure which arose after the conclusion of the Agreement and which the Parties could not have foreseen or prevented. Such events include but not limited to fires, floods, earthquakes, acts of war, rebellion, military actions, lockdown of communication systems, etc. which make no longer possible the performance of the obligations under the Agreement. If such event persists in excess of 3 (three) months, each of the Parties shall have the right to terminate the Agreement by notifying in advance the other party thereon.
10. Հայտարարություններ ու երաշխավորություններ	10. Declarations and Warranties
10.1. Կապալառուն սույնով հայտարարում և երաշխավորում է , որ՝	10.1. The Consultant hereby declares and warrants that:
10.1.1. Չկա որևէ իրավական և/կամ տեխնիկական արգելք, խոչընդոտ, կամ վերջինիս ներգրավված աշխատուժը, տեխնիկական հագեցվածությունը առնվազն բավարարում են Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու համար,	10.1.1. There are no legal and/or technical obstacles or impediments, and the Consultant's engaged workforce and technical resources are at least sufficient to duly and timely fulfill its obligations under the Agreement.
10.1.2. Տիրապետում է օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ լիցենզիաներին, արտոնագրերին, թույլտվություններին և	10.1.2. It possesses all licenses, permits, authorizations, and approvals required by law for the fulfillment of its obligations under the Agreement.

համաձայնություններին որոնք անհրաժեշտ են Պայմանագրով ստանձնված պարտավորությունների իրականացման համար,	
10.1.3. Ամբողջությամբ գիտակցում է Պայմանագրով ստանձնված իր պարտավորությունների ծավալը, նպատակը, դրանց կատարման/չկատարման իրավական և փաստական հետևանքները,	10.1.3. It fully understands the scope and purpose of its obligations under the Agreement, as well as the legal and factual consequences of their performance or non-performance.
10.1.4. Պայմանագրի կատարման նպատակով կգործադրի բոլոր ջանքերը, կդրսևորի բարի կամք՝ դրանում սահմանված պարտավորությունները ամբողջությամբ կատարելու համար:	10.1.4. It shall make every effort and demonstrate good faith in fully performing the obligations stipulated in the Agreement.
10.1.5. Չերծ կպահի Պատվիրատուին, վերջինիս հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերություններ ունեցող անձանց Պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի մեղքով առաջացման ենթակա/առաջացած ցանկացած տեսակի իրավական պատասխանատվությունից, այդ թվում՝ վարչական, քաղաքացիական և քրեաիրավական ոլորտներում:	10.1.5. It shall hold the Client and any persons engaged in labor or civil-law relations with the Client harmless from any legal liability—whether administrative, civil, or criminal—that may arise or result from the Consultant’s fault in the course of performing the Agreement.
11. Եզրափակիչ դրույթներ	10. Miscellaneous
11.1. Պայմանագիրը հանդիսանում է ամբողջական համաձայնություն Կողմերի միջև և գերակայում է Կողմերի միջև Պայմանագրի առարկայի շուրջ նախկինում ձեռքբերված բոլոր պայմանավորվածությունների նկատմամբ: Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:	10.1. The Agreement constitutes the complete agreement of the Parties and supersedes all earlier agreements regarding the subject matter hereof. The Agreement may be amended only upon mutual written consent of the Parties.
11.2. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:	10.2. Issues beyond regulation hereof shall be regulated by the RA legislation.
11.3. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Հակասությունների կամ տարընթերցումների դեպքում գերակայում է հայերեն լեզվով շարադրված տարբերակը: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:	10.3. The Agreement is made in 2 (two) authentic copies in Armenian and English. In case of discrepancies the Armenian version shall prevail. Each if the Parties is given one copy.
Աշխատանքների կատարման պայմանները և դրանց նկատմամբ Պայմանագրով ներկայացվող պահանջները սահմանված են «Աշխատանքների Նկարագրություն» վերտառությամբ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ :	The conditions for the execution of the Works and the requirements applicable to them under the Agreement are defined in Annex 1 titled “ <i>Work Description</i> ”, which forms an integral part of this Agreement.
Նախագծային առաջադրանքը սահմանված է «Ճարտարապետական ծառայությունների ծրագրի առաջարկ» վերտառությամբ Պայմանագրի Պայմանագրի անբաժանելի մասը կազմող ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ :	The design brief is defined in Annex 2 titled “ <i>Request for Proposal for Architectural Services</i> ”, which also forms an integral part of this Agreement.
Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են «Աշխատանքների կատարման ու	The timelines for the execution of the Works are specified in Annex 3 titled “ <i>Works Implementation</i>

վճարումների ժամանակացույց» վերտառությամբ Պայմանագրի Պայմանագրի անբաժանելի մասը կազմող **ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՈՒՄ**:

Timelines and Payment Schedule”, which is an integral part of this Agreement.

Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային վավերապայմանները

The Legal Addresses and Requisites of the Parties

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

THE CLIENT

«Հայաստանում ֆրանսիական համալսարան»
հիմնադրամ

“French University in Armenia” foundation

Իրավաբանական հասցե՝
Դավիթ Անհաղթ 10, 0037, Երևան, ՀՀ

Legal address:
10 Davit Anhaght, 0037, RA

ՀՎՀՀ՝ 01002296

TIN: 01002296

h/h՝ 0000000000000
«Ակբաբանկ» ԲԲԸ

s/a 0000000000000
“Acba Bank” OJSC

Ս. Նակուզի Բուրդիշոն
Ռեկտոր

S. Nacouzi Bourdichon
Rectrice

Ստորագրություն
Կնիք

Signature
Seal

ԿԱՊԱԼԱՌՈՒ

THE CONSULTANT

«Կազմակերպության անվանում» ՍՊԸ
Էլեկտրոնային հասցե՝ info@mail.am
հեռ. (000) 00-00-00

“Company name” LLC
E-mail: info@mail.am
Tel.: (000) 00-00-00

Իրավաբանական հասցե՝
ՀՀ, 0000, Երևան, անուն փ, 0

Legal address:
0 name St., Yerevan, 0000, Armenia

ՀՎՀՀ՝ 00000000

TIN 00000000

Հ/Հ՝ 0000000000000
«բանկ» ՓԲԸ

s/a 0000000000000
“bank” CJSC

Name Surname
տնօրեն

Name Surname
Director

Ստորագրություն
Կնիք

Signature
Seal

Աշխատանքների նկարագրություն/Work Description

